

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓԱՐՈՍԵԱՆ


ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՏԻ ԵՆ ՈՒՂՂՆԵՐ ԱՌ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ ԳԱԶԻՐԷ (Հասպայանի)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HARBANIEH LE CAIRE (Égypte)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՆԱՄԱԿ

Տարեկան, ողջ դահլիճ. 60

Վեցամսեայ " 35

ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ

Տարեկան Փրակ 20

Վեցամսեայ " 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ ԿԱՆԵԿ Է

ՃԻՐԹԱՏՅՈՒՆՔԱՆՔԻ

Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղութեամբ գրութիւնք եւ շնորհակալութիւնք:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

Մեր նախորդ յօդուածներուն միոյն մէջ ցոյց տուինք թէ՛ մարդիկ իբր ընկերական էակ իրենց գոյութեանը պահպանութեան և յառաջդիմութեան համար պէտք ունին իրարու օգնութեան, ինչպէս մեր ներքին գործարաններն, սիրտ, թոք, լեարդ, երիկամունք և այլն, պէտք ունին իրարու օժանդակութեան՝ կազմն առողջ և իւր բնական վիճակին մէջ պահելու համար:

Փոխադարձ օգնութեան այս պէտքն աւելի զգալի կը լինի, երբ մարդ իր ֆիզիքական կարողութիւններն կամ առողջութիւնն կորսնցնելով կ'իյնայ հիւանդութեան վիճակի մէջ, ուր այլեւ անկարող կը գըտնուի իւր անձին պաշտպանութեանը և հոգածութեանը՝ կամ երբ մարդ ձախողուածներու հետեանք կը կորսնցէ իւր հարթութիւնը՝ իւր բարեկեցիկ վիճակը, ու կ'իյնայ աղքատութեան կամ իւր օրասակահիկն հայթայթելու անկարող վիճակի մէջ:

Օգնութեան կարօտ վիճակի մէջ եղող մը աշխարհի ո'ր անկիւնին մէջ և ի'նչ աղքատ ալ որ լինի՝ իրաւունք ունի ակնկալելու իւր ցաւերն մեղմացնող, իւր վիշտերը փառատող և իւր արցունքները սրբող օժանդակ ձեռք մը. եւ մենք իբր մարդ, իբր ընկերական էակ կամ գործիչ, պարտական ենք օգնութեան ձեռն կարկառելու այնպիսոյն՝ առանց խտրութեան ազգի եւ կրօնքի, հասակի եւ անտիճանի:

Մարդուն ամենէն երջանիկ, ամենէն հաճոյալիւ վայրկեաններն անոնք են՝ որոնց մէջ նա կարող կը լինի օգնել կարօտեալի մը և մխիթարել վշտաբեկ սիրտ մը:

Զօրագալտ, Զանգ-Ալիսիայի այդ նշանաւոր հեղինակն՝ որ կ'ապրէր Բրիտանիոյ գրեթէ 450 տարի առաջ, և որոյ հետեւողներու գէտ՝ Եղնիկ իւր ոսկեղինիկ ոճով գրած է Յաղագս կեղծ աղանդոյ գրքոյին՝ կ'ըսէ, թէ «Մարդու հոգւոյն ամենէն վտանգաւոր ախտն է իւր ընկեր արարածներու նեղութեանց հանդէպ անզգայ մնալն»:

Բաւական չէ միայն գիտնալ թէ՛ մարդ իբր ընկերական էակ պարտի ո' և է մնաս չ'հասցնել ուրիշներու, այլ պէտք է գիտնալ նաև, թէ մարդ իբր ընկերական գործիչ եւ ստատքիչ պարտաւոր է աւելի բարձր,

աւելի ազնիւ, աւելի մաքուր և կատարելութեան աստիճանի մը հասնել ամեն բարի գործերու մէջ:

Թող մեր բոլոր խօսքերուն ու գործքերուն սկիզբն ու վախճանը լինի բարոյքի, բարոյքի և բարոյքի, միշտ և ամենուրեք բարութիւն. Թող մեր ընկերական կեանքի մէջ իշխէ սէրն և ո'չ ետևանձնուիրութիւնն և ո'չ գձուձահախնդրութիւնը, կամազոհութիւնն և ո'չ կամակորութիւնն, առաքինութիւնն և ո'չ փառասիրութիւնը:

Ամեն դարու և ամեն երկրի իմաստասէրներն ու մեծամեծ հանճարներն իրենց վարդապետութեան հիմն և գլխաւոր գործն ըրած են բարութեան և արդարասիրութեան սկզբունքն. թէ՛ հեթանոս և թէ՛ քրիստոնէութեան կրօնի մէջ մեծ տեղ մը դրաւ և է բարութեան և մարդասիրութեան վարդապետութիւնը:

Մուհամմէտ, իսլամութեան հեղինակն կ'ըսէ. «Մարդու մը ճշմարիտ հարստութիւնը այս աշխարհի մէջ ա'յն է, որ նա բարիք ըրած է իւր ընկեր արարածներուն: Երբ մարդ մեռնի, ժողովուրդը կը հարցընէ՝ ի'նչ ստացուածք ձգեց իւր ետեւէն, իսկ հրեշտակները կը հարցնեն՝ ի'նչ բարիք զրկած է իւր առջեւէն»:

«Բարդապետութիւնը,» կ'ըսէ Լօմբրօզօ, «նորաձեւութեանց գերազանցութեան և բազմազանութեան մէջ չէ, ոչ ալ լրագիրներու ազատութեան և ո'չ նոյն իսկ ազատութեան արտաքին նշաններու մէջ, այլ գլխաւորապէս ամենալայն մարդասիրութեան և արդարասիրութեան զգացումներու մէջ»:

Այն որ զուրկ է մարդասիրութեան և արդարասիրութեան ազնիւ զգացումներէն, զուրկ է նաև սրտի ազնուութենէ և նկարագրի բարձրութենէ: Տեսնել իւր նմաններն օգնութեան կարօտ վիճակի մէջ եւ մնալ անտարբեր, կը նշանակէ անզգայութիւն: Եւ ի'նչ յառաջդիմութիւն կրնանք ակնկալել ա'յն ժողովուրդէն՝ որ զուրկ է զգացումէ, նկարագրէ և պարտաճանաչութեան գիտակցութիւնէն:

Մեր հայրենի հողին մէջ կան այսօր օգնութեան կարգը, անօթի ու ծարաւ, մերկ ու բոկոսն քանի մը տասնեակ հազար որբիկներ՝ որոց սրտաճմլիկ կացութիւնը պէտք է ի գութ շարժէ ամեն հայ սրտեր:

Իբր մարդ, իբր ընկերական էակ կամ գործիչ ժողովուրդ՝ մեր պարտքն է ինամեկ զանոնք, մեր ձեռքն է ազատել այդ բազմաթիւ որբերն փողոցի կեանքէն անառակութեան ընթացքի մէջ ի յնայու վտանգէն և տառապանքէն:

Բացէ՛ք ձեր քրտինքն ու բերաններն և տուէք ինչ որ կրնաք, տուէ՛ք քանի մը վշտաբեկ սրտեր մխիթարելու: Իտուէ՛ք քանի մը հայրակորոյս և մայրակորոյս փոքրիկներ անուցանելու, փութ՛ք քանի որբերն ու աղքատին օգնելէն լուսաւորի բան չ'կայ: Թող մի՛ տաք որ անոնք մեծամեծ աղտոտ բարքերու զոհեր լինելու համար, այլ օգնեցէ՛ք անոնց որպէս զի կրթութիւնն ու մեծան ընկերութեան օգտակար անհատներ լինելու, բարեկիրթ հայրեր ու մայրեր լինելու ուղղութեան մէջ:

Յիշեցէ՛ք թէ անոնք ևս ձեզի պէս խորհող և զգացող էակներ են. անոնք ևս փափուկ եւ զգայուն նիւթեր կը կրեն իրենց մէջ. անոնք որոց համար անցեալն ունի իւր բազմթիւ հրապոյրն, ներկայն իւր դաւն վիշտերն ու ցաւերն, եւ ապագան իւր մեծութեամբ մտատանջութիւններն, եւ կ'անարիւն այնպիսի երկրի մը մէջ՝ ուր օրինաց անգ կը ախրէ կամքն եւ բռնակալութիւնն, արդարութեան հաճոյքն եւ կողոպտան, իսկ զթութեան եւ մարդասիրութեան տեղ բարձրադասութիւնն ու մարդասպանութիւնը:

Ազատել զանոնք այդ դաւն կացուութեանէն՝ այդ անտանելի լուծէն ձեր պարտականութիւնն է: Իո՛ւք իբր հայ, իբր մարդ, իբր ընկերական էակ կամ գործիչ, պարտական էք ո'չ միայն հաց և ջուր մատակարարել անոնց, ո'չ միայն ազատել զանոնք. այլեւ սորվեցնել անոնց ի'նչ որ բարձր է ի'նչ որ ուղիղ ի'նչ որ ճշմարիտ, ի'նչ որ առաքինի և՛ բարի. եւ սուրբ է եւ՛ վսեմ:

ՏՐ. ՅԱԿՈԲԱՆ

ՄԱՍՆԱԿՈՐ ՆԱՄԱԿԱՆԻ

Գ.

ՆԱՄԱԿ ԱՌ Գ.

Չ'ԱՂԷՔԱՆՈՐԻՍ.

Բարեկամ, — Թերեւս պիտի սպասես որ նախորդ հարցերու նկատմամբ ըրած խոստովան լիութի կատարեմ. բայց ո'չ, ինչպէս կը տեսնեմ, անկարելի պիտի ըլլայ այդ:

Փահիրէն Աթէ Բուհնքան ի նման կանանց աչքերը չբացնելու չափ նորաձեւութիւններ հնարելու ճարտիկութիւնը ինչպէս նաեւ լայնածաւալ վաճառատունը չունի միւս կողմէն ամէն օր պաշտօնական նամակներով նորութիւն մը հրատարակ նետելու լայնացձակ քիչօքիները ունի ազգային տեսակէտով:

Վերջերս ալ ինչ ընէ Գե կը հաւնին: Սպասելով եւ յուսալով որ ամիրայութիւնը վերջապէս պիտի խնկարկուի եզրկատանայ ժողովուրդէն, այս սպասումի անյաջողութիւնէն յուսակոտոր, ելաւ ազգային տուրքը ստեղծեց « ըստ Սահմանադրութեան » է ըսելով:

Այս նորաձեւ գիւտը, ինչպէս կը կարծուի, ոչ գեղեցիկ սեռը պիտի կրնայ հետաքրքրել եւ ոչ ալ . . . ազգը սեռի գրպանին հետ սերտ յարաբերութիւն պիտի կրնայ հաստատուի:

Այստարի ամինէն լրջախոս մարդն անդամ, որ առ նուազն 30—40 կտոր թարգմանութիւններ եւ հեղինակութիւններ կ'արտադրէ, իր քահանայութեան ծիծաղը չ'պիտի կարենայ զսպել եւ կուշտ ու կուս պիտի խնդայ (պիտի նարթի) այս ին ու սկսուած եւ կենսով վերջացած օրէնսդիրներու Վրայո:

Նոյն ժամանակ մեկ մասը գիտես արդէն ինչպէս որ քեզի հետ գիտին ամէն անոնք, որոնք « Արշալոյս » ի բաժանարար ընթերցողներն են եւ անոնք՝ որոնք մէկէն միւսէն մուտքով ամենամեծ հետաքրքրութեամբ կը կարդան:

« Փարձ » այս տեսակներուն փոխանակ . . . կայան ըսելու, լրագրատէր հիշատէր անաղնիւ չը սեպուելու համար:

Ազգային առաջնորդարանի տպուկները (Pas de quatre) հետեւեալ յայտարարութիւնը ըրին:

« Ազգային տուրք » սուէք՝ որ ձայն ու քուէ ունենաք, եւ նամակներու անագին ծրարներ չըջան ընելու սկսան Պէջի Սուրէնէն — Մուսթիլէ, Ապտինէն — Իսմայիլիյէ, Հապպանիյէն — Մէնչիյէ, Աթապա — Նիստրայիյէ — Սէպիլիյէ, Սէպիլիյէն — Շոքիյարա, Շուպրայիյէ — Ապպաիլիյէ, ուր պաշտօնական գնացքը կանգ առաւ յիմարանցի դրան առջև:

իր հրատարականը կանուխէն ներկայացուցած ըլլայ ուր որ անկ է):

Առաջնորդարանի կողմէ քուէարկութեան համար որոշեալ օրն, անցեալ կիրակի Դեկտ. 10ին էր: Արդարեւ կ'արժէ որ յաջորդ թուով ալ (եթէ թերթիս խոտալանանջ խմբագրութիւնը հաւանի) առաջնորդարան ըրած այցելութիւնս ու այնտեղ տեսածներս ու լսածներս քեզի պատմեմ, որպէսզի համոզուի թէ « Արշալոյս » որչափ անհաւասար ու ժողով պայքար կը մղէ Առաջնորդարանի պիտի գլուխ աղաներուն դէմ, ժողովուրդեան իրաւանց պաշտպան կենսալու դժուարին ձեռնարկին մէջ:

### Հ Ե Ռ Ա Պ Ի Բ

13 դեկտ. 99  
Փէնէրալ կաթաքը Սթերթթօրմ քաշուած է: Կորսուած զօրքերէն մաս մը իր բանակառեղին գտած են:

« Բւիսքմինթա » կաղէթը կը կարծէ որ Փէնէրալ Մէթուրնի կացութիւնը վտանգալի է:

Փէնէրալ Մէթուրնի անցեալ երկու շաբթի օր փորձեց Պօէրնի Բու Մաճէրս Թօնթէնի ամբաստանող գլխերը գրաւել բայց ետ մղուեցաւ բազմաթիւ կորուստներու յետոյ: Փէնէրալ Վաշօի մեռեալներու շարքին մէջ է:

14 դեկտ. 99.  
Մաճէրս Թօնթէնի անգլիական կորուստները 832ի կը հասնին, մեռեալ թէ վիրաւորեալ:

68 զօրքապետներ կուտուրու տնկարող վիճակի մէջ գտնուած են:

Փէնէրալ Մէթուրնի հարկադրուած է Մոսսա Դիլիւր ապաստանել:

Եզթներորդ զօրքաբաժին մը կը կազմուի Լօնտրաի մէջ:

10նՏՐԱ, 16 Դեկտ.  
Փէնէրալ Պիւլլէր՝ Բօլճօնօյի առաջ թիւնէրալ անցքը կտրել անցնել փորձեց ուրբաթ առաւօտ: Փորձը յաջողած չէ ու մեծ ջարդուածներ կրկին Չիլիլի ապաստանած է, տասն հինգ թիւղանօթ ետին թողնելով: Ընտ Հալապի, Սիլիվիական ամբողջ վաշտը ընաշինչ եղած է: Հրետանիի ձիերը մեռած են:

Փրէթօրիսէ ստացուած հեռագրի մը համաձայն, Փէնէրալ Քրոնթէ երկու հազար կը հայուէ անգլիացուց Մաճէ-Թօնթէն ու նեցած կորուստը:

### Ա Չ Ք Ա Յ Ի Ն

Անցեալ կիրակի 10 Դեկտ. Առաջնորդարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Երեսփոխանական ժողովէն պիսկած չորս անդամնց ընտրութեան քուէհամարը:

Քն. Էարկիլ իրաւունք շնորհուած 64 հոգիէն 48ը միայն պատասխանած էին Առաջնորդարանի հրաւերին, մնացեալները թուով 16ձ ընակախաբար ժողովուրդի բողոքով դատուեալ կը պատկանէին:

Քուէներէն մին ապիսակ էր անսխառ ճան քուէարկուն է ու մէկը արժանի կը դատէր իր ազգային իրաւունքներն անոր վստահելու համար:

Ուրիշ քուէթուղթի մը պարունակութիւնն էր, տեղի ունեցած ապօրինութիւններն ձաղկող և անընդունելի հռչակող դիտողութիւններ: Այս թուղթը ծալուելով

մէկ կողմ դրուեցաւ, նախագահին կողմէ անընդունելի թէ՛ ուրիշ մ'ալ իր քուէթուղթին մէջ բուռն կերպով բողոքած էր, բայց իրենք և ոչ մէկը նկատողութեան առնելու չափ զարգացում ունին:

Վերջապէս 26 ձայնով մէկ երեսփոխան միայն ընտրուեցաւ և պիտի երթայ բազմիչ պատկառելիներուն քով: Եթէ այս ցանցառու նիհար թիւը սակայն, ընտրելուն անձնասիրութիւնը չ'վիրաւորէ և ետ չ'կեցնէ զինքն առաջնորդարանի անհրաժեշտներուն կարգը դատուելէ:

Կ. Պօլսոյ « Արեւելք » օրաթերթէն կը տեղեկանանք թէ, Երուսաղէմի տպարանէն երբեմն լոյս տեսնող « Սիօն » ամսաթերթը՝ որ Երկար տարիներէ ի վեր հանգստեան կոչուած էր, վերստին պիտի հրատարակուի և առ այդ պէտք եղած հրամանները ձեռք ձգելու կ'աշխատի Սաղիմայ Յարութիւն Պատրիարքը:

Չրի հաց ուտելու վարժուած Սաղիմական շրջիկին նոր խելքը գլուխը կուգայ հասկնալու համար թէ ձեռքը ձեռքին վրայ դրած նստիլը և երկու ոտքերը փռած (փրսմ ամենալեւժ փառացն Աստուծոյ) քննալը մեծ մեղք է:

### Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք

Երկուշաբթի օրը 11 Դեկտ. տեղի ունեցած է Ռէիլեանց բնակարանին մէջ յԱզգային Գործարարական Միութեան Պէյ Ռէիլեանի ամենամեծ ժողովին, ընդ Օրիորդ Ռօզ Բարթոլ Պէյի:

Պատկառնութեան հանդէսէն վերջ, որպէս ներկայ էին միմիայն երկու ընտանիքներու անդամները, երկու ամուսնաւոր Փահիրէ մեկնած և Օթէլ Շէֆրէտի մէջ հաճատուած են՝ վայելելու համար իրենց մեղրազուսինը:

Մեր սրագրին շնորհաւորութիւնները երկու սիրալիկ ամուսնուհիներն:

ՀԱՄԱՍԱՐԱՆ գիտական և գրական յանձնարարութիւն, Նոյնիքի Ս. Թիւր սուպրան:

« Համալսարան » իրեն համար գծած համետ ուղղութեամբ և մասնաւոր ճոխ ու բազմակողմանի պարունակութեամբը այժմէն իսկ չ'առ յուսալից ապագայ մը կը խոստանայ, թէ պիտի յաջողի իր ծրարած նպատակներուն մէջ:

Մեր անկողն ու ջերմագին շնորհաւորութիւնները յայտնելով Պատ. Խմբագիր Տիարը Մ. Պաղտատարանի և Յ. Շաբաշի, անպայթ յարատեւութիւն կը մաղթենք իրենց ազգօգուտ և դժուարին ձեռնարկին համար:

« Համալսարան » ըստ անորդարողու պայմանները:

Առ նուազն 48 էջերէ բնդկացեալ թիւերու համար

|               |         |                |
|---------------|---------|----------------|
|               | Տարեկան | Վեցամսեայ      |
| Ֆրանսա        | 10 ֆր.  | 5 ֆր.          |
| Օտար երկիրներ | 12 »    | 6 »            |
| Ռուսիա        | 5 րուբ. | 2 1/2 րուբ.    |
| Ամերիկա       | 2 տուար | 1 տու. 20 սէնթ |

Բաժանորդագրելու պիտի յԱՆՆԻՎ ԷՆ Նամակ, յօգուած, գրամ եւ այլն պէտք է զըրկի առ  
Rédaction du HAMALSARAN  
3 Place Monge 3  
PARIS

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Փարիզի էյֆելեի անշտարակը կը կորսնցունէ իր կարևորութիւնն, ինչու որ Ամերիկայի մէջ պիտի շինուի անկէջ բարձր աշտարակ մը՝ որոյ յատակագիծը պատրաստեր է բնիկ երկրաչափ մը։ Բոլորովին երկաթէ պիտի ըլլայ և հնգալարի վերին յարկին մէջ ամառային ու ձմեռային պարտէզներ, ճաշարան և թատրոն պիտի գտնուին։ Հանդէսի գիշերները 1000 էն աւելի ելք քտրական լամպարներով պիտի լուսավառուի ամբողջ աշտարակը։ Երկու թեւան համար չորս միլիոն ֆրանք ծախք պիտի ըլլայ և ամբողջ շէնքը երկու տարին պիտի աւարտէ։

— Աշխարհահռչակ ելք քտրագէտ էտիսըն՝ երիտասարդութեան ատեն հեռագրատան մը մէջ կ'աշխատէր։

— Իրլանտայէն Անգղիա տարին 100 միլիոն հաւկիթ կը զրկուի։

— Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքի նամակատան ցրուիչներուն 100 ին 15 ը իգական սեռէ են։

— Բնագիտութեան դասարանի մը մէջ։

— Ջերմութեան յատկութիւններն որոնք են։ — Ջերմութիւնն կ'ընդլայնէ, կ'ընդարձակէ և կ'երկնցունէ մարմինները, ինչպէս ցրտութիւնն ևս կը պղտկցունէ, կը կարճեցնէ զանոնք։ — Կրկնք օրինակաւ մը հաստատել զայս։ — Այո՛, այո՛, և մեզը մինչդեռ ցրտութեան պատճառաւ օրերը կարճ են, ամառը ընդհակառակը Ջերմութեան պատճառաւ օրերը նոյնչափ կ'երկարին։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՊՈՅԻՐ

Փրանսական Թամ լրագրի 30 Նոյեմբերի թուոյն մէջ հետեւեալ խմբագրական տեսութիւնը կը կարդանք, որ շահեկանութեան զուրկ չ'իյնելուն համար մեր ընթերցողաց կը ներկայացնենք։

4. Պօլսոյ նորանոր միջազգայնորէն ապաւորութիւնը կը թողուն թէ՛ նոյն իսկ մահմտականաց մէջ ջնդհանուր յոգեմբ և շարժում կը տիրէ։ Ժամանակ տո՛ ժամանակ, ցորեկ ատեն գործուած մարդասպանութիւնք՝ որոնց միտազոյնը Սաուդաւմին որդոյն վրայ կատարուեցաւ, և ուրիշ նուազ կամեօր եղիլութիւնք, Սուլթանին խիստ մօտ և մինչև անգամ իր Ալպանական թիկնազաններուն մէջ, կատաղի ատելութեանց և մահու չափ թշնամութեանց ապացոյցները կ'երևան։

Մի քանի օր առաջ, քաղաքական և զինուորական դասակարգի մէջ բարձրագոյն դիրք գրա-

ւող երեք անձնաորութիւնք և ո՛չ միայն Իւլէ-մայի նուիրական հանգամանքն ունեցող, այլ նաև Եէյի իւր խաւով խիստ մօտ գտնուող չորրորդ մը, առանց ձեւակերպութեան ձերբակալուեցան, դատուեցան պալատը գումարուած արտակարգ ժողովի մը կողմէ, որուն կը մասնակցէին նախարարները և դատապարտուեցան Եէյին աքտորուելու։ — Ինչ որ մի քիչ դանդաղօրէն կը համապատասխանէ մահուան, զոր դատաւորներէն երկուքը պահանջած էին — և իսկոյն ճամբայ դրուեցան դէպ իրենց աքտորավայրը։

Այն օրէն ՚ի վեր մահմտական բազմաթիւ պաշտօնակալներ ձերբակալուեցան։ Ջրոյց կը պարտի որպէս թէ զաւարտութիւն մը կազմուած ըլլար՝ տնտեսութեան ուսման միջոցաւ, Նոյեմբեր 24ի ուրբաթ օրուան սէլամիլըքի հանդէսի միջոցին սպաննել Ապտիւլ Համիտը։ Բայց դաւաճաններէն մին խղճահարուելով՝ գործը յայտնեց է եղբոր Տիւսմիթեայ չորս ուսման բռնուեր են եղբոր և ոճրի այս անյաջող ձեռնարկին առթիւն է, որ Եէյին աքտորուիլը որոշուեր և գլխաւոր յանցաւորները, ինչպէս նաև զօրակոտ մը, իսկոյն խըրկուեր են այդ պատժատեղին։

Թէ՛ այս եղելութեանց և թէ՛ այս մասին եղած զրոյցներուն ծանրակշիռ հանգամանքը սակետին վրայ է թէ՛ այս անգամ խնդրը ոչ թէ Հայերու, Սերպերու կամ Պուլղարներու և Մակեդոնացի յոյներու, վերջապէս ոեւէ հպատակազգայնութեան թշնամի կեանքներուն վրայ է, այլ բարեպաշտ մահմտականները, մահմտականութեան եռանդազին հաւատացեալները, մարդարէին հաստատած կրօնքին պաշտօնակներու վրայ է։

Այն իւլէմաներուն՝ որոնք այնպիսի էական դեր մը խաղացին 1876ի յեղափոխութեան մէջ, յեղափոխութիւնն ոչ Ապտիւլ Աղիզին գահը և կեանքը արժեց։ Պէտք է կարծել որ իր զօրքերը թեսալիոյ մէջ Յունաց զէմ առաջնորդող դադիին յաղթութեանց շնորհիւ, Ապտիւլ Համիտի վերստացած ազդեցութիւնն ու բարոյական իշխանութիւնը անհետացած, կամ անհետանալու մօտ են։ Որպէսզի գաւեր և ոճրական ձեռնարկներ տեղի ունենան ո՛չ թէ իսլամական տիրապետութեան և օսմանական կայսրութեան անհաշտ թշնամներու, այլ նոյն իսկ բարեհաւատ մահմտականներու և ընտիր տաճիկներու կողմէն, պէտք է նաև կարծել, որ ժողովուրդին նեղութիւնն ու տառապանքը հասած են այն աստիճանին, ուր անձնապահպանութեան ընտրուածը կը յազմէ ցեղական ատելութեանց ու կրօնական մրցումներու։

Ահա այս կէտն է որ Երլազի ասպնջականին միտքը կ'զրազնցնէ, և ինչու որ ալ ունիլ՝ Վանի զի Ապտիւլ Համիտ քրիստոնեայ ազգայնութեանց հաշիւը կարգադրելու ինքզինքը կարող կը կարծէր այն օրէն ՚ի վեր, յորում Եւրոպայի գէթ լեւծ լեւան մտապնդութիւնը ստուգեց Անատոլի կոտորածներու առթիւ։ և մահաւանդ այն օրէն ՚ի վեր, յորում տեսաւ որ Գերմանիոյ հզօր կայսրը իր քոյն եկաւ, այդ կոտորածներէն և հելլենականութեան պարտութիւնէն քիչ ետքը, իր շնորհքը ինչպիսի և յորդանոս բարեկամութեամբ իր ինկած ու՛ ունը վերականգնելու։

Սակայն հիմայ, քանի որ նոյն իսկ մահմտական տարրին մէջ սեղի կ'ունենան ապստամբական կամ արքայասպանական ձեռնարկներ, կացութիւնը միեւնոյնը չ'է։ Յարգմամբ, այս անխօս

սպանակները՝ անհաւատներու ազմկալի յոգուէն շատ աւելի անհանգիստ բրաւ հաւատացեալներու նրամանտաբր։

Այս է պատճառ որ այնքան մեծ և այնքան սաստիկ զգուշութիւններ ՚ի գործ կը զնէ իր անխօղը եղբոր Սուլթան Մուրատի մասին, որ յամառօրէն կ'ապրի և որ նոյն իսկ իր խորհրդաւոր գերութեան շնորհիւ՝ ունեցաւ և պահեց կուսակիցներ անձնօճէրի անյողողող համոզուած, թէ՛ անոր մտաւորական առողջ վիճակին և թէ՛ իրաւունքին վրայ։

Այս է նաև պատճառ այն մտատանջ հսկողութեան, զոր Սուլթանն ու իր մարդիկը ՚ի գործ կը զնեն երբ օտար երկիրներու մէջ գտնուող երկրատար թուրքերուն արարքները կը գիտեն։ Պարբերաբար գաղանի գործակալներ, ձեռքերին ոսկիներով լեղուն, կը մեկնին Կ. Պօլսէն զըլլուած զնելու համար այն կուսակցութեան որեւէ մէկ անդամին, որ կը հաւատի ընտանի փարսիք վերադառնալ՝ շնորհիւ կուսի Գրամ առնելով վերադառնալու նպատակաւ միայն դասակարգ եղած էին ամէն այդ քոտոտ ոչխարները։ Կը մնայ փոքր մաս մը խղճի և սրտի տէր անձերու, որոնք ամեն բան զոհած են իրենց համոզմանց, որոնց Սուլթանի ո՛չ մի պատուիրակը չ'պիտի համարձակի տիրող առատաձեռնութիւնը ներկայացնելու նախատինքն ընելու, և որոնց վօթմ անկախութիւնը կը բաւէ անաբեկելու Աստուծոյ օուկը իր պալատին մէջ։

Անոնց վրայ կեդրոնաւորուած են օսմանական ոստիկանութեան ճիգերը, խիստ շատ անգամ ալ ձեռնառութեամբ ինքնակոչ ազատ տէրութիւններու ոստիկանութեանց։ Ամենակեղծքի միջոցներու առարկայ եղած է անոնց պաշտօնական թերթը Մեզլէթը, զոր արեւմտեան կառավարութիւններ մերթ կը հաւանին հալածելու բացէ ի բաց կամ կեղծաւորաբար։

Անոնք պատճառ եղան Լահէյի վեհաժողովին և Հոյանտական կառավարութեան քով եղած ստիպողական ձեւաւորութիւնը, որպէս զի խիստ լուծութեան ենթարկուին անոնց հետ նաև հայերը։ Անոնց համար Բ. Դուռը խնդրեց և ընդունեց թրքական դեսպանութիւն մը Պէրի մէջ, ուրկէ կը պատրաստեցին մեծ հսկողութեան տակ ատեն փախտականները, և անոնց համար կուղէ ընկալութեան և տիրայանձնութեան դատաւարութիւն մը հաստատել Հէլլէտական կառավարութեան հետ։

Ամեն այս բաները — ի բայ առեալ այն արտակարգ պատգամաւորութիւնները, որոնք շուայարար ոսկի կը թափին Եւրոպական մամոյ մէջ բարեխօսներ զանելու կամ հաճոյակատար լուծիւն գնելու համար — բաւականապէս կը բացատրէ այդ մեծ կայսրութեան վեհապետին հողոյն վիճակը։ Ինկապէս, մահմտական մտքերու տակաւին խիստ տկար եղող այդ քարժամանքով աւելի կը մտատանջուի Ապտիւլ Համիտ քան հպատակ ազգայնութեանց գիւղաբնութիւնները։

Մտքերու վրայ վերստին քիչ մը տիրանալու և իսլամ հաւատացեալներու առջև իր պատիւը մի քիչ ոսկեզօծելու համար է, որ Ապրիլեան թրիպոլի կառավարութեան հրամայող սկսելու Հիւսիսային Աֆրիկէի մէջ հողային վերստացումներ, որոնք Փրանսայի հետ վաղ կամ անագան դիւանագիտական կամ զինուորական պայքարի մը վտանգին ծնունդ պիտի տան Այս միջոցաւ արձիւէն փախչելով կարկուտի բռնուելու մեծ վտանգին մէջ կը գտնուի Սուլթանը։

ԼԱ ՄԻԻԹԻԻԷԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱՔՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱԻՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրականներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները։

Ապահովագրականներուն արդէն վճարած է կամ թեպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ որ զրեթէ՛ աշխարհի ուրիշ որ և է ընկերութիւնէ մէկ միլիար աւելի է։

Ս. ԻԼՈՆՍԻ ԸՆԴՀԱՆՈՐ ՆԵՐԿԱՅԱԿՈՅԻՉ Ի Գահիրէ։

Աշխարհի մէջ գաղութաւ ուրիշ որ և է ընկերութիւնէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ։

ԱՂԻՐՈՒՄ ԼԱՎԻՍԸՆ զլլաւոր գործ. յ'Աղեքանգրիւս։

ՕԳՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅ ՈՐԲԻՎՆԵՐՈՒՆ

Ի նպաստ ՀԱՅ ՈՐԲԻՎՆԵՐՈՒՆ Բազմավեպ  
բացատրել պրակ մը պիտի հրատարակէ: Թերթին  
երկայնութիւնը 42 հարկերորդամէթը: լայնքը 42  
հարկերորդամէթը: Թերթը պիտի քաղկանայ 40 է-  
ջերէ: ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած:  
Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր:  
Պիտի պարունակէ ժողովրդեան ուշադրաւ, հետա-  
քրքրական եւ օգտակար յօդուածներ:

Բազմավեպի այս բացատրել լայնածաւալ միծ  
թերթը պիտի հրատարակուի իբրև անդրանիկ «Հայ  
պատկերազարդ թերթ» մը Illustration armé-  
nienne, նման եւրոպական միծ սղգայ շարաթա-  
կան պատկերազարդ թերթերու:

Պիտի տպուի մի քանի հազար եւ ստակը պիտի  
յատկացուի հայ որբանոցներուն:

Գինն է ԿԱՆԻՒԿ 2, 50 ֆր. 1 րբ. 50 սէնթ.

Այս ծանրկարգութիւնը կը հրաւիրուին մերազնեայ  
այն պէն ազնիւ ու զթած անձնաւորութիւնները  
որ բաժանորդագրուելով այս բացատրել պրակին  
համետ լուծայ մը բարեհաճին ձգել հայ որբիկ-  
ներու գանձանակին մէջ:

Բաժանորդագրաց անունն, եւ ով որ այս նը-  
պատակաւ որբիկներուն օգնութեան պիտի համի  
հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի  
իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին Բազ-  
մավեպի պրակներուն մէջ:

Այս բացատրել թերթին մէջ պիտի տպուին  
նաեւ ծանուցումներ, մէկ տողի զինն է 25 սանդիւ.  
փափաքողք թող փութան յղել իրենց ծանուցում-  
ները:

Բազմավեպի հասցէն է.

Rédaction de la Revue PAZMAVEB  
(St. Lazare) VENISE, Italie.

ԲԱՅՈՒԱԾ Է  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՆԻՒԿ 1 Ձրանք, յե օպագրուեան 5 Դրո. ողջ

ՇԱՏ ՁՈՒՄԲԱՍԻ ԵՒ ՀՐԱՋԱՆԳԻԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԻՔԴՈՏՆԵՐ ԵՒ ՎԷՊԻԿՆԵՐ  
ԿԱՄ

ՄԱՐԴԱՅԻՆ ԿԵՆԱՅ ՎԱՐՊՈՅՐԸ

անունով գրքին օր Հայկական, Յունական, Ռու-  
սական, Արաբական, Պարսկական եւ Թրքական  
կեանքերէ աւնուած է:


Հաւաքեց եւ կարգաւորեց  
Մ. ՀԱՅՅՈՒՆԻ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ տպարանէն մաքուր եւ  
ճաշկաւոր տպագրութեամբ շուտով լոյս կը տես-  
նէ եւ 16 էջերէ բաղկացեալ տետրակներով ամեն  
շաբթու կը յանձնուի բաժանորդաց սոյն օգտակար  
հրատարակութիւնը. այլազան ազգերը կեանքէն  
առնուած բազմադիմի պատկերներով. երբ ամեն  
զասակարգի ընթերցողներն՝ այր կամ կին .  
ուսեալ կամ անուս. հարուստ կամ աղքատ, ծի-  
ծաղներով զուարճացնելէ զատ, պիտի ծանօթացնէ  
ախարհի զարմանալի եւ սարսափելի գաղտնիք-  
ները, հիանալի միջոցները երջանիկ լինելու. հա-  
տընտիր գողեր, իմաստուն դատաւորներ, ապուշ  
ամուսիններ, ճարպիկ խաբեբաներ եւն. եւն.  
իրենց գործերով եւ անոնց արդիւնքներովը, որոնք  
պիտի նպաստեն ընթերցողին կուշտ, կուշտ խնդալէ  
յետոյ, կե՛աց պայքարին մէջ յաջողիլ եւ շի  
խաբուել ամենեւին. եւ՛ լինիլ հմուտ եւ փորձառու  
կեանքի ամեն պարագաներուն մէջ:

Գրութեաններու եւ 20 օրինակէ աւելի բա-  
ժանորդագրուողներու մասնաւոր զեղջ պիտի լինի:  
Դիմել առ Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ Ի Գահիրէ (Հապ-  
պանիլէ):

Վ. Ա. ՃԱՍՈՒՍՈՒՆ ԹԵՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ  
ՇԱՐԷ-ԱՊՏԻԿ-ԱՋԻՋ



Թէյի գործածութեան ընդհանրանա-  
լովը, թէյի ճաշակն եւ նրբացած է. որով  
թէյի առևտուրն վաճառականութենէ անելի  
արուեստ մըն է որ միայն երկարատեւ եւ  
ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառու-  
թեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ  
է իր քսանամեայ գոյութեամբ եւ ընդարձակ  
գործառնութեամբ, այս տարի եւ իր մաս-  
նաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազ-  
մազան եւ մեծաքանակ ընտիր թէյեր ՁԻ-  
ՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ Եւ ՀՆԴԿԱՍ-  
ՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ  
արդէն հասած է մեզ ինչպէս նաեւ ձը-  
մեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք  
իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն  
ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու  
ՉՄՓԱՉԱՆՑ ատանութեամբ ալ ամեն քսակի  
գիրամատչելի են:

Թէ է. Պօլսոյ եւ գաւառաց, եւ թէ օտար  
երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած  
վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել  
եւ յարիւ մեր «Սփղըռուքին» սր է՝

Ուղղամուտիկ թէյերու օճակի, կօխի  
եւ զնոց մասին:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեզի  
եղած ԿԱՆԻՒԿ գրամով յանձնարարութիւնք  
փութօք կը կատարուին:

1 — 50

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՊՕՆՕԿՐԱՅ

ԳԱՋԻՐԷ, — Մուսի փրօց, — ԳԱՋԻՐԷ  
Ս. Եւ Ս. Սեւեակի վաճառասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ  
կը գտնուի պատի եւ քօնօտի ընտիր տե-  
սակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճա-  
շակի յարմար զանազան տեսակ արանց եւ կա-  
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ար-  
ծարք եւ ճիւղ:

Յրանտական եւ ամերիկեան ապրանց ամե-  
նաընտիր տեսակներէն զարդեղներ, շղթաներ,  
օղիք, մասանիներ եւ այլն:

Ս. մէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն  
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն  
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ  
40 — 50

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԿԱՐԵԻՈՐ ԱՋԴ

Ամենափափուկ ստամբա ունեցողնե-  
րուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք  
զուրկ են փորձառու եւ վարպետ հացա-  
գործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու  
առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը  
լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամար-  
սութիւն կը պատճառեն եւ հետեւաբար շատ  
մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն եւ հետեւաբար  
բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ  
մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Փոօթի Պափ վաճառասան մօտերը, Կամե-էլ-Պեմարի  
ճիւղ դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր  
յաճախողներէ գտած ընդունելութիւն-  
ներէն քաջալերուած, պատիւ ունին յայ-  
տարարելու թէ՛ իրենց փութիւն մէջ պատ-  
րաստուած ընտիր Ֆացերը զուտ եւ անխար-  
դախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փութիւն մէջ  
գաղղիական, անգղիական, գերմանական եւ  
յունական հացեր պիտի պատրաստուին,  
իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայ-  
մանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով  
պիտի պատրաստեն սուրճի, թէյի եւ կաթի  
պարսիմաթիւներ կային:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձ-  
նարարութիւնք ամենայն ճշդութեամբ եւ  
փութով կը կատարուին: 14 — 50

ԻԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

|             |               |      |
|-------------|---------------|------|
| Ա. Թիւ 4641 | շահած է Ձրանք | 1000 |
| Բ. " 8622   | "             | 200  |
| Գ. " 1042   | "             | 100  |
| Դ. " 3340   | "             | 50   |
| Ե. " 8247   | "             | 50   |

Հետեւեալք 23 ական ֆրանք կը շահին

|      |      |      |      |      |      |
|------|------|------|------|------|------|
| 9203 | 4324 | 4192 | 8097 | 231  | 8087 |
| 5263 | 1533 | 5208 | 86   |      |      |
| 5614 | 7814 | 5769 | 786  | 2261 | 2789 |
|      | 1523 | 7938 | 4640 | 3988 |      |

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց  
վիճակեալ պարզենին ութը օրէն չեն  
գանձուիր, լինելութեան զննուելին սեփա-  
կանութիւնը կը լինին:

Le Gérant Dr A. S. MAQOPIAN